ՄԻ ՔԱՆԻ ՕՐ ԽԻԶԱՆՈՒՄ

(ԻՄ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ)

Տ. ՓԻՐՈՒՄԵԱՆՑԻ

Մայիսի առաջին օրերն էր։ Երկնքի աստղերը արագ արագ նոսրանում էին։ Նրանց մեծ մասը, որպէս պատրոյգի վերջին մնացորդ, մի օրհասական ճիգ էին թափում իրանց վերջին աղօտ լոյսն արձակելու ու յանկարծ հանգչում։ Մեծ Արջը՝ գալուկ ու լուսապատ՝ արդէն մօտեցել էր հորիզոնին։ Լուսինն անհետացել էր մռայլ ամպերի տակ և տեղի տւել Արուսեակին, արշալոյսի այդ գեղաշուք թագուհուն։ Մի անթափանցելի խաւար պատել էր Վանի մթնոլորտը. դա «Ադամայ մութն» է։ Ադամայ մո՛ւթ... Ճիշտ այդ միջոցն են ընտրել վանի ժամկոչները իրանց գիլ կոչնակներով փողոցէ փողոց ընկնելու ու բարեպաշտ մարդկանց ժամ հրաւիրելու, նրանց դռներին «Ողորմի՛ Աստուած» կանչելու։ Այդ խորհրդաւոր պահուն մարդ ակամայ սարսում է. քաղաքի բոլոր թաղերում մի երաժշտական աղմուկ էր բարձրացել այդ փայտեայ գործիքներից ու նրանց մրճերից (կոչնակ)։ Վանի մերձակայ սարերը, Զըմփ-զըմփ մաղարան և ուրիշ քարափներ անդրադարձնում են իրանց արձագանքը, ճնճղուկներն ու ուրիշ երկնային թռչունները սկսում են յանկարծ ծըւծըւալ, ճըւճըւալ ու ճըկճըկալ։ Գիշերուայ կուսական լռութիւնը, նրա յաւիտենական խաղաղութիւնը վրդովւում, եղծւում է։ Դա մի սրբազան րոպէ է. Ադամայ մութը խաւարի թագաւորութեան ամենայետին շունչն է։ Բարեպաշտ ժողովուրդը արդէն ոտքի վրայ է, նա թոթափում է իրանից սև գիշերուայ մեղսաբեր ու աղջամղջային մտքերն

ու զգացումները և մտնում է Աստուծոյ տաճար վերջին հարած տալու «Սատանայի չար պատրանքներին՝» իր սրտատրոփ «Հրամարիմքով»։

Բայց գիտե՞ք ի՞նչ է «գողի ժամը»։—Ժամկոչները, դեռ ևս փողոց չ'ելած, մտնում են եկեղեցի, վառում կանթեղներից մէկը, աղօթում ու դուրս գալիս քաշելու զանգերը, որին ապա հետևում է կոչնակ մանածելը։ Տաճկաստանի հայերը այդ անդրանիկ զանգահարութեան տուել են «գողի ժամ» մականունը, զի նրա հետ կցած ժամկոչների շրջանառութիւնը, մօտալուտ սաղմոսերգութիւնն ու ժամերգների անց ու դարձը սարսափ են զցում բոլոր գողերի ու անառակների սրտում ու հալածում, խափանում խաւարի այդ չարաչար որդիներին... Այո՛, պէտք է ամէն բան պարզւի։

Աղամայ մութն էլ շատ կարճատև է. Արուսեակի փայլը հեռվհետէ սաստկանում է, նրա յետևի ամպերը նոսրանում, գոլորշիանում են, կաթնագոյն եթերը սկսում է ժպտալ. արշալո՛յս...

—Դէ՛, առաջ ընկիր, Գասպա՛ր,—ասում եմ ձիապանիս, մի թեթև կռնկի հարած տալիս ձիուս ուբաց թողնում նորա սանձը։

Մենք գնում ենք Խիզան, հին Կորդուաց աշխարհի մի մասը որ այժմ Բաղէշի վիլայէթի կազաներից (գաւառներից) մէկն է։ Երեք օրւայ ճանապարհ ունինք։ Վերջին օրը կը միանայ մեզ հետ նաև Կ. Պոլսում հիմնւած «Խիզանի ուսումնասիրաց ընկերութեան» տեսուչը։ Բազաքի փողոցներում անընդհատ հանդիպում ենք ժամասէր այր և կանանց, որոնք գունդագունդ դիմում են եկեղեցի։ Բայց արշալոյսի այդ կանուխ պահուն կարելի է պատահել նաև այնպիսիներին, որոնք արդէն յետ են դառնում այնտեղից։ Կանոնաւոր ժամ երթալը այնպիսի մի հոգեկան պահանջ է Վասպուրականցիների համար, որ նրանից յետ չեն մնում նաև ամենաբազմազբաղ մարդիկ, որոնք այնտեղ երկար մնալ անկարող լինելով, ըստ ապով մի երկրպագութիւն են անում Աստուծուն, կարճ աղերսներ ուղարկում առ Նա, յաջողութիւն հայցում նոյն օրւայ բարիլոյսի համար ու հապճեպով դուրս ելնում, գնում իրանց գործին։ Դա է «բագգալ ստավրոդին» (մրգավաճառի աղօթք), ինչպէս ասում են յոյները Կ. Պոլսում։

Բազաքն անցանք, ոլորանք։ Դուրսը, բաց դաշտումը արդէն

իրան սաստիկ զգալի էր անում ցուրտը, Վասպուրականի այդ մայիսեան պաղ՝ առողջ մարդոց կազդուրող, բայց թոյլերի ոսկորները ծակող ու «խելքը մաղող» ցուրտը։

—Աֆանդի՛, աղօթարանը նոր է բացւում, հալա մի երկու սահաթ էլ ցուրտ կը լինի, մի կթխայ (րիւմկայ) էլ անուշ արա՝ որ չը մրսես։

Գասպարի գլխաւոր «փորացաւը» իմ մրսելս չէր։ Ես իսկոյն հասկացայ նորա դարդը և խուրջինիցս օղին հանելով, մինը ես խմեցի, միւսը նրան տուի, ձմեռւայ վերարկուս աւելի պինդ կոճկեցի, ծխախոտս վառեցի ու նորէն ճանապարհ ընկանք, քերելով մեծ մասամբ Բզնունեաց ծովի ափերը։

Երկար չեմ կանգնի ճանապարհի նկարագրութեան վրայ։ Վանից նախ գնում ենք Արտամետ, յետոյ Հայոց-Ձորի Անգղ ու Ոստան գիւղերը։ Դա մեր հին Ոստան քաղաքն է, որ այդքան ծաղկեցաւ մանաւանդ Արծրունեաց թագաւորութեան օրով։ Գիւղն անբողջապէս քիւրդերի ձեռքն է անցել, որոնք քանդել աւերել են նրա հին շինութիւնները։ Տեղ-տեղ երևում են միայն կիսաւեր եկեղեցիներ և բազմաթիւ վանքեր (որոնց թւում նաև 40 խորան ունեցող Իլու վանքը), որոնցից մի քանիսը հետզհետէ նորոգւել են Աղթամարի կաթուղիկոսներից։ Այդ կանաչաւէտ գիւղը լայն աստիճաններով բարձրանում է ծովի ափից և ունի հրաշալի հորիզոն։

Ոստանից մի քանի ելևէջներ անելուց յետոյ մտնում ենք Գաւաշի (Ռշտունեաց աշխարհ) կլորակ դաշտավայրը։ Դա մի շատ գեղեցիկ կաթսայ է, շրջապատուած երեք կողմից լեռներով, իսկ չորրորդից—Վանայ ծովով, որի մէջ երևում է Ախթամարայ ժայռոտ կղզին իւր բարձրադիր վանքով։ Շրջակայ լեռները ծածկւած են քսանից աւել աւերակ ու կիսաւէր վանքերով, որոնց մեծ մասը այժմ ծառայում է հայոց բ ե ր ի [1]) կամ քիւրդաց գոմերի տեղ։ Անարատ և կանգուն է մնացել միմիայն Նարեկայ հռչակաւոր վանքը, Տաճկահայոց այդ թանկագին սրբավայրը։ Դա կառուցւած է դաշտի հիւսիսային լեռնակողի վրայ և դիտում է ամբողջ Ռշտունեաց աշխարհը, Բզնունեաց ծովի նշանաւոր մասը Ախթամար և Կտուց կղզիներով և այլ հեռու տեղերը։

---

[1]) Կաթ կթելու տեղ, գիւղից դուրս։

Գաւաշից մտնում ենք Կարճկանի սահմանները. անցնում ենք Կապուտկող լեռը, Ս. Յակոբ Մծբնայ Հայրապետի անուանի վանքը ու մտնում ցած հովտի մէջ գտնուող մի գիւղին։

—Աֆանդի՛, է՛ս էլ Բէլու գեղը,—ցոյց է տալիս մատով իմ չիլերոն Գասպարը—ասում են որ մեր Հայկ «Թագաւորը», երբ անօրէն Բելին յաղթեց, նրա լէշը բերեց, էստեղ թաղեց...

Ականջներիս չեմ ուզում հաւատալ, լսելով իմ շատախօս Ֆիպանի պատմական տեղեկութիւնը։

—Քեզ ո՞վ ասաց,—գառնում եմ նրան. հեգնութեամբ, կարծելով թէ դա որ և է տիրացուի շինած «մասալ» է։

—Ի՞նչպէս թէ ո՞վ ասաց—նեղանում է ուղեկիցս—էսքան տարի «քիրաջութիւն» կ՚անեմ, բիթուն աշխարհքը տակն ու վրայ եմ առել, դէ՛ հրամմէ գնա Խայոց-Զորայ Աստուածաշէն գիւղը, տե՛ս ի՞նչեր կը պատմեն...

—Դա հնուց խօսք է, ջանըմ, սուտն ու զորթը Աստուած գիտէ,—վրայ բերաւ նա փոքր ինչ աւելի սառնարիւն—ամմայ էս կողմերի բոլոր գեղացիք հաւատում են էդ բանին...

Ես միամտացրի նրան ու աւելի ընդարձակ տեղեկութիւններ ուզի մեր այդ հնադարեան աւանդութիւնից։

Եւ, ինչպէս յետոյ ստուգեցի, այդ և դրա նման անթիւ պատմական տեղեկութիւններ պտտում են Հայոց Զորի, Ուշտունեանց և Կարճկանի գիւղացիների մէջ։ Իսկ գալով մեր նախահօր խնդրին՝—դեռ մինչև հիմայ էլ Հայոց-Զորի Աստուածաշէն գիւղի մօտ գտնուած մի մեծ աւերակ «Հայկայ-բերդ» է կոչւում, իսկ «Աստուածաշէն» գիւղի հիմնարկութիւնը նրա (Հայկի) յաղթանակի տօնախմբութեան ապացոյց է համարւում։

Հետևեալ օրը, երեկոյեան պահուն, մենք հասանք վերջապէս Կարճկանի այն գիւղը, որտեղ կենում էր Խիզանի ընկերութեան տեսուչը։ Նրա ուղեկցութեամբ պէտք է գնայինք միւս առաւօտ պաշտօնապէս քննելու ընկերութեան չորս կրթարանների վիճակը և արդիւնքը՝ Կ. Պոլիս, գործադիր ժողովին ուղարկելու։

Տեսչի հետ է նաև նրա ծառան, Խըլօ անունով։

«Խիզանի Ուսումնասիրաց ընկերութիւնը» պահում էր երեք ուսումնարան Կարճկանում և մինը միայն Խիզանում, թէև ընկերութեան նպատակը, ինչպէս իւր անունիցն էլ երևում է, դիւխաւորապէս Խիզանցոց լուսաւորութեան գործն էր։

Կարճկանը, ինչպէս նաև իւր հարևան Գեաւաշը (Ռշտունիք), Տաճկահայաստանի ամենաբերրի տեղերից մէկն է։ Գտնուելով Կորդուաց լեռների ստորոտներում, դրանք՝ իրանց ընտիր ցորենով կերակրում են այդ լեռների համարեա թէ բոլոր քիւրդ ու հայ բնակիչներին։ Բայց Կարճկանը շտեմարան է նաև համեղ «գլուլ»-ի (սիսեռի մի տեսակը) ու «ոսպ»-ի, Հայաստանի անվերջանալի պասերի այդ անհրաժեշտ պարագաների։ Կարճկանը, վերջապէս տարածում է իւր բարերարութիւնը նաև Վանայ ծովակի շրջակայ երկիրների վրայ իւր անապառ փայտի պաշարով, որի համար, և շա՛տ իրաւամբ, տուել է նրան «Փէտի աշխարհ» հանրածանօթ անունը [1]։

Այդպէս ուրեմն, տեղ բռնելով բարձրաբերձ Մոկսի, Շատախի, Դէհի, Բոհդանի (Կորդուաց լեռների վրայ) ու ցածրադիր Վասպուրականի արանքներում, նա տալիս է հաց իրանից վերև կեցողներին և տաքութիւն՝—իրանից ներքև ապրողներին։

Կարճկանի երեք դպրոցները քննելուց յետոյ մենք պէտք է անցնէինք Խիզան։ Ես ճանապարհ դրի իմ Գասպար «քիրաջուն» և վարձեցի մի շաբաթ ժամանակով մի այլ ձի։

Կարճկանի Եղեգիս գիւղից մինչև Խիզանի համանուն գիւղը տանում են երկու տարբեր ճանապարհներ. մինը բարձրանում է իրարու վրայ դիզուած սարերով, միւսը դալարում մի ծուռ ումուռ, անվերջանալի ձորով։ Մենք, ինչպէս ձիաւորներ, ընտրեցինք երկրորդը, թէև դա ճիշտ երկու անգամ երկար է, այն է տասներկու ժամ։

Վաղ առաւօտ, հէնց որ աղօթարանը բացուեց, ճանապարհ ընկանք տեսչի ու նրա Խըլօ կտրիճ ծառայի հետ, որ պէտք է սպասաւորէր ու հետևէր մեզ ոտով։ Դա մի դիւրաթեք, սրտոտ ու ինքնապաստան լեռնցի էր, հարազատ զաւակ Հայաստանի սարերի։ Նա մեր ձիաներից աւելի լաւ էր քայլում և ուշ դադրում։ Եւ իս-

---

[1]) Տես իմ «Վանայ ծովակը», «Մուրճ» 1890 № 4.

կապէս շատ քիչ ձի կարող էր նրա հետ այդ բանում մրցել. նա շաբաթը մի անգամ Կարճկանից ոտով դնում էր Բաղէշ քաղաքը ու բերում այնտեղից տեսչի «փոշտան», գործ դնելով միմիայն երկու օր, մինչդեռ նոյնը անել մի հատ ձիով համարեա թէ անկարելի է։ Նա մեն էր գալիս զինուած, ոչոքից չէր վախենում ու պէտք եկած տեղն էլ իրան քիւրդ ձևացնում։ Արգէն սկսած Կարճկանից և անցնելով Կորդուաց աշխարհի վրայով մինչև Բաղդադ ու Մոսուլ՝ հայերը հանդիպում են բացարձակապէս քիւրդերի նման ու խօսում նրանց բարբառներով ո՛չ երբէք պակաս նրանցից։

Ուրեմն մեր «քրդաձև» Խըլօն հա՛մ սպասաւորում, հա՛մ առաջնորդում, հա՛մ պաշտպանում էր մեզ այդ բիրտ, խոպանացած ու «բարբարոս» երկրում։

Մօտ երեք ժամ այդ ձևով գնալուց յետոյ, մենք յայտնւում ենք Կարճկանի այն մասում, որ Կեցան է անուանւում և որի դարևոր, խիտ ու վսեմ անտառները և՛ հիացնում և՛ զարգանդեցնում են մարդուն։ Գրանց մի կտորը, բաղկացած բարձր բարդենիներից, մեր ճանապարհորդած տարին գնեցին 10,000 ռուբլով Վանցի երեք —ընկեր հայերը։ Մնացածը, որի մէջ կայ նաև մեծ քանակութեամբ հացի ու թեղի ծառ, պատկանում է նոյն քաղաքի հարուստ թիւրքերին։

Կեցանի մէջ ձորը տեղ-տեղ կուչ է գալիս ու նեղանում, տեղ-տեղ՝ լայնանում ու երկրորդական ձորեր կազմում։ Գիւղերը այդտեղ՝ տեղի անյարմարութեան պատճառով՝ շատ նւազ են ու սակաւամարդ՝ ութ, տաս, տասներհինգ տնից բաղկացած։ Նրանց դիրքն էլ ազգագրական տեսակէտից ոչինչով չէ գանազանւում Հայաստանի բոլոր գիւղերից և մի աւելորդ անգամ էլ յիշեցնում մի շատ յիմար երևոյթ. բարձր, զով ու փարթամ տեղերում տնկուած են քրդաց, իսկ ցած, խեղտուած ու գձուձ փոսերում՝—հայոց գիւղերը...

Ձորի մէջ յաճախ պատահում են ու զանազան ուղղութեամբ փախչում մանր գետակներ, որոնցից մէկը քանի որ մօտենում ենք Խիզանին՝ հետզհետէ մեծանում է և այն աստիճան՝ որ անհնարին է լինում ձիով անցնել։ Այդտեղ ահա՛ առաջարկում են մեզ իրանց ծառայութիւնը այն նախնական՝ իսկապէս «լիլիպուտների» և ոչ թէ «աժդահայ» խիզանցիներին յարմարեցրած՝ «կամուրջները», որ բարի

մարդիկ իրանց յօժար կամքով և հոգու փրկութեան համար «սարքում են» այդտեղ։ Երևակայեցէք երկու երեք բարակ գերաններ վրայ ածած ծառի ճիւղեր, վրան մի քիչ հող կամ աթար ածած, մի արշին լայնութիւն ունեցող մի «ճլորդի», որ անհամ կերպով ճըռճըռում է ձեր ոտների տակ ու ձեր «խելքը մաղում», ստիպելով ձեզ նայել նրա տակը վշվշող փրփրակապ, կատաղի գետակին ու նրա մէջ բիզբիզ ցցուած ահարկու քարերին։ Բայց երևակայեցէք նոյնպէս որ դուք մենակ չէք, այլ մի ձեռքով քաշ էք տալիս ձեր յետևից նաև մի «ջանաւար», չորքոտանի մի բարեկամ, որ անհրաժեշտապէս կարօտ է ձեր օգնութեան՝— և դուք մի մերձակայ գաղտփար կը կաղմէք այն հուչակաւոր «մազէ-կամուրջների» վրայ, որոնցով տաճկաստանցի հին աբեղաներն ու պատաւ մամիկները սարսռեցնում են մեղաւոր հոգիներին ու անմեղ մանուկներին։

Այդպիսի մազէ-կամուրջներից մէկիցն էր որ իմ խեղճ ձիս «թրմփալի» «դրխակաց» գետակի սրածայր քարերին, բաղմաթիւ վէրքեր ստացաւ մէջքին ու, ինչպէս յետոյ տեղեկացայ, ձեր «չարը տարաւ»։ Առաջ նրա մի ոտը խրւեց «կամրջի» ծակերից մէկում. երեք հոգով թափւեցանք նրան օգնելու, մօտ հինգ րոպէ չարչարւեցանք, բայց տեղի նեղութեան պատճառով անկարող եղանք ոտը վեր քաշելու։ Այն ժամանակ խեղճ անասունը մի վերջին ճիգ թափեց ինքն իրան օգնելու, բայց հէնց որ ոտը դուրս խլեց՝ հաւասարութիւնը կորցրեց ու մէջքի վրայ գրնգաց այն մահաբեր քարերին...

Սակայն դարեր առաջ, երբ մի քիչ տարբեր հանդամանքներ էին տիրում այդ երկրում, այդ վտանգաւոր ճլորդիների տեղ կամ գոնէ նրանց հետ միասին եղել են նաև խիստ ամուր ու սիրուն կամուրջներ, որոնցից մէկի հետքերը՝ կամարները կոփածոյ կարմրագոյն քարերից՝ արտադրութիւն խի՛ստ վարպետ ձեռքերի՝ հիացնում են դեռ ևս հետաքրքիր անցորդին։ Պակաս չեն նաև վանքերի ու բերդերի մնացորդներ։ Երբ ես դրանցից մէկի առաջ ձիս կանգնացրի ու գլուխս ծռելով սարսափահար վերև նայեցի՝—մեր նոր չիւերոն Խըլօն առաջս տնկւեց ու բացատրեց որ այդ մինչև երկինքը բարձրացող «Սմբատ Թագաւորի բերդի» գլխից ներքև էին վիժում հայերը տէրութեան մահապարաններին, որոնց ահեղամեծ կտորը ականջն էր մնում։

Հետզհետէ բարձրանալով ու բարձրանալով, մենք մօտեցանք վերջապէս, արեւի մտնելուց մի քիչ առաջ, Խիզանի սահմաններին ու մի քանի զիգզագներ ու ելեւէջներ գործելուց յետոյ մտանք մեր ուզած գիւղը։

Առաջինը, որ խիստ աչքիս զարկեց այդ ալպեան երկրում, դեռ ևս հեռուից՝ խիզանցիների երկյարկանի տներն էր։ Հայաստանի մեծ մասը պտտելուց և նորա խրճիթները Քսենոփոնի ու Հերոդոտի նկարագրածի համեմատ գտնելուց յետոյ դա մի աներևակայելի բան էր ինձ համար։ Ռուսաստանում, Պարսկաստանում և Տաճկաստանում տեսել եմ հազարաւոր հայ գիւղեր և նրանց բոլորի տներն էլ շինուած են նոյն և մի անդրջրհեղեղեան «ճարտարապետութեամբ». մի արշին գետնի տակից սկսած՝ նրանք բարձրանում են 2—4 արշին գետնից վեր, տափակ, սուաղած տանիքներով։ Երկյարկանի տները Սալմաստի գիւղերում ոչինչով չեն փոխում, իմ կարծիքով, այդ ընդհանուր երևոյթը, քանի որ սալմաստցի տղամարդիկ ապրում են իբրև քաղաքացի Թիֆլիսում, Թաւրիզում և Ռուսաստանում, պարապմունք ունենալով չարչիութիւն, վաճառականութիւն ու խաչագողութիւն։ Եւ շատերը պէտք է զարմանան լսելով, որ Սալմաստի այդ փոքրիկ գիւղ-քաղաքները շրջապատուած են հաստապինդ ու խի՛ստ թանձր պարիսպներով։

Սակայն տների հայկական տիպը փոխւում է դեռ ևս Կարճկանում։ Տանիքները այստեղ ոչ թէ տափակ, այլ կոնաձև են, դրսից կանոնաւոր կերպով սուաղած ու ծայրին մի ծակ թողած։ Հեռուից Թուրքի գլխներին նմանող այդ բրգերը շատ գեղեցիկ են ներսից։ Նրանք կազմուած են խաչաձև, միմեանց մէջ հաղցրած գերաններից։ Ամէն մի սենեակի գլխին՝ չորս պատը կանգնեցնելուց յետոյ՝ նախ և առաջ շինում են մի կիսատ, մօտ մի արշին լայնութեան առաստաղ, բաց թողնելով այդպիսով մի քառակուսի դատարկութիւն։ Ապա վերցնում են չորս հատ տաշած գերան, իւրաքանչիւրը 4—6 արշին երկարութեամբ ու զոյգ զոյգ այնպէս դարսում միմեանց վրայ, որ ծայրերին խաչեր գոյանան։ Յետոյ վերցնում են աստիճանաբար միշտ փոքր և փոքր գերաններ և նոյն ձևով ու մի կառա-

բեալ ներդաշնակութեամբ նրանց միջի տարածութիւնը փոքրացնելով, հասնում են վերջը՝ մօտ չորս արշին բարձրութեան վրայ՝ մի կէս-քառակուսի արշին դատարկութեան, որ և ծառայում է որպէս երդիս — լուսամուտ։ Գերանների աւելորդ ծայրերը դրսից կտրտում են ու կոնաձև սուաղում, իսկ ներսից նրանց շարուածքը՝ ինչպէս ասացի՝ մի գեղեցիկ տեսք է ընծայում շինականի անզարդ ու անարուեստ բնակարաններին։

Հայաստանի բոլոր այն գիւղերում ուր տները մի յարկանի են, ուրեմն համարեա թէ նրա բոլոր կողմերում, գիւղացու տունը բաղկանում է 1. «տան-տնից» — որտեղ նա թոնիր ու օջախ ունի, ապրում է, եփում ու քնում՝ շատ անգամ մի քանի զոյգ ամուսիններով. 2. «փարախից» (ախոռատուն), որտեղ նա իւր կովը, եզն ու գոմէշն է պահում և 3. «մառանից» — ուր նա իւր բոլոր ուտիսւայ ու պասւայ պաշարեղէնն է ամբարում։ Բայց չափաւոր կարողութեան տէր գիւղացիք, ուրեմն մի խոշոր քանակութիւն այդ ժողովրդի, մի տնտեսութիւն են անում. նրանք իրանց մի քանի զոյգ չորքոտանիներին իրանց «տան-տան» մէջն են հիւրասիրում... Բայց Խիզանի հայ լեռնականը այդ խոհանոցը, ախոռն ու մառանը ներքևը թողնելով հանդերձ, մի երկրորդ բնակարանն էլ աւելացրել է նրանց գլխին յատկապէս իր նստելու ու քնելու համար։ Բացի այդ, նա արհամարհել է Հայաստանում այնքան խոր արմատներ ձգած երդիսները ու իր կացարաններում փոքրիկ պատուհաններ բացել, որոնք ձմեռը թղթւում են ձէթոտ թղթով, իսկ ամառը իսպառ բաց մնում։ Արդեօք դա ապացոյց չէ՞ որ ազատ լեռներում ազատ օդ ծծող ու ազատ սիրտ կրող բնութեան որդին անկարող է կուչ գալ խոնաւ ու մռայլ նկուղներում։

Բայց Խիզանցիք աննախանձելի են շատ ուրիշ կողմերից. տնտեսական նեղ դրութիւնը կատարելապէս խեղդում է նրանց։ Խիզանցոց ու նրանց դրացի այլ հայ լեռնականների պարապմունքը ինքը բնութիւնն է որոշել, տալով նրանց այդ հիանալի, խոտաւէտ ալպերը։ Բայց խաշնարածութիւնը որ նրանց ամենագլխաւոր և գրեթէ միակ — քանի որ խօսքը այստեղ մի ասիական ժողովրդի վրայ

է — պարապմունքը պիտի լիներ՝ խիստ սահմանափակ ու աղճատուած է տեսական անկուշտ քիւրդերի ու նրանց ամենազօր շէյխերի բունակալութեամբ։ Բաւական է յիշեցնել ընթերցողին որ գրաճաքիս նիւթը ուրիշ բանի վրայ չէ, բայց եթէ հանրածանօթ Շէյխ-Զալալէդդինի «Հայրենիքի» վրայ։

Թէպէտև Խիզանի, ինչպէս նաև Կորդուաց աշխարհի միւս գաւառների հայերը, անհամեմատ բարձր են իրանց սրտոտութեամբ մեր սովորական ազգայիններից, բայց և այնպէս նրանք ընդունել են իրանց վրայ քրդերի գերիշխանութիւնը։ Հարկ տալով մի կողմից նրանց շէյխերին և միւս կողմից՝ տիրապետող տէրութեան, նրանք ընկել են ոնտեսապէս, դիմել պանդխտութեան ու մինչև իսկ կաարեալ գաղթականութեան, տեղի տալով իրանց թշնամի տարրին։ Այսպիսով հէնց նոյն արագութեամբ որով քրդերը աճում են այդտեղ օրէցօր, նոսրանում և սպառւում են հայերը։ Գիւղեր եմ տեսել, որտեղ տաս — տասնըհինգ տղամարդից աւելի չը կար, զի բոլորն էլ «կարիրութեան» էին գնացել։ Ահա՛ այդ հակառակ տարրերի անհաւասարութիւնն է պատճառ, որ խիզանցիք սաստիկ վախենում են շատացնել իրանց անասունները, որպէս զի «շան և գէլի» փայ չը դառնան նրանք։ Նրանց գիւղերը շինուած լինելով չափաւոր և միջին բարձրութեան լեռների վրայ, ամենաբարձրերը նրանք պահում են որպէս ամառանոց իրանց հօտերի, որոնց հետ ուղևորւում են նաև իրանք իրանց ընտանիքներով և մնում այնտեղ ամբողջ երեք ամիս, բաց երկնքի տակ։

Այդ մինչև երկինքը բարձրացող լեռնագագաթները հիւր գնալուն նրանք ասում են «զոմմայ երթալ» և տարւայ այդ եղանակին «զոմմալ» գնացողների թիւը Խիզանի կէսից պակաս չէ։

Խաշնարածութիւնից յետոյ խիզանցիք պարապում են երկրագործութեամբ։ Զուտենալով ոչ մի կտոր տափարակ տեղ, նրանք մշակում են լեռների զառիվայրները կամ նրանց կողքերը։ Բայց այդ «կողքերը» երբեմն այն աստիճան ուղիղ ու ողորկ են լինում, որ մի անսովոր մարդ ոչ թէ վառ ու ցանք, այլ նոյն իսկ զբօսանք անել չի համարձակւի այնտեղ։ Բայց խիզանցին, որ սարդի պէս մագլցում ու ման է գալիս քարափներին, արօրով հերկում, ցանում ու աճեցնում է այնտեղ իր անհրաժեշտ հացահատիկները։ Դեռ ևս այդ

կողմերը չը գնացած, ես լսել էի Վանում որ իբր թէ երբ խիզանցին վառ ու ցանք է անում՝ նրա կինը կամ մի այլ ոք նրա մէջքից մի չուան է կապում ու ծայրը պինդ կերպով ձեռքում բռնում կամ մի ցցի վրայ ամրացնում... թէև այդ ընդհանրացած կարծիքը, ինչպէս իմ հարց ու փորձն ապացուցեց, բոլորովին սուտ դուրս եկաւ, բայց և այնպէս մի անգամ էլ համոզուեցայ, որ կարիքն ու հանգամանքները զարմանալի հրաշքներ են գործել տալիս մարդոց։ Միրտս շուռ ու մուր էր գալիս դիտելով գիւղից թէ ինչպէս հարիւրաւոր ոչխար, կով, կին ու երեխայ վխտում էին մրջիւնների նման դիմացի բոլորովին ուղղաձիգ սարի կրծքին։ Փորձեցի մի պտոյտ անել այդ լեռներում գիւղացիների հետ, բայց երկու ժամից յետոյ յետ փախայ, ամաչելով երկու ձեռքերիցս բռնած՝ եպիսկոպոսի նման՝ «տոտիկ» անել այնտեղ, ուր մարդիկ թռչկոտելով ու երգելով են անցկացնում։

Խիզանցոց մշակած հացահատիկներն են գլխաւորապէս կորեկն ու գարին. մշակւում է նաև բաւական քանակութեամբ «տարեկան»։ «Տարեկանը» ցորենի մի հասարակ տեսակն է, որ բանում է սարոտ, սակաւաջուր ու անբերրի տեղերում։ Նրա հացը ցորենի հացից պակաս համեղ է, կպչուն և նւազ սննդարար։ Բայց խիզանցոց սովորական հացը կորեկի վերին աստիճանի անհամ հացն է, որ թխուելուց յետոյ իսկոյն չորանում, քարանում է ու գաչի պէս փշրւում. դրան գլխաւորապէս գործ են ածում «բրդելու» համար՝ մածնի ու «գեօրմազդի» մէջ։ Հայաստանցիների սիրած, գրեթէ ամենօրեայ կերակուր, «գեօրմազդը» այն թթու հեղուկն է, որ մնում է «ծծումի» մէջ՝ մածնից իւղ շինելիս։ Գարուց լաշեր են թխում սովորաբար տարեկանի հետ խառը, մինչդեռ կորեկից, նրա չափազանց անկպչուն լինելու պատճառով, միմիայն կլոր, մօտ քառորդ արշին տրամագծով ու կէս վերշոկ թանձրութեամբ՝ հացիկներ։ Խիզանցի տանտիկինները, ինչպէս նաև Տաճկահայաստանի համարեա բոլոր գեղջկուհիները «ափում են» իրանց ամենօրեայ հացը հէնց ամեն Աստուծոյ առաւօտ։ Նրանց լեռներին անմատչելի ցորենը՝ պէտք եղած ժամանակ՝ բերւում է Կարճկանից կամ Գեաւաշից։ Նրանք մշակում են, ինչպէս նաև նրանց դրացի լեռնականները, կանեփ, որի թելերից չուաններ են հիւսում իրանց ոտնամանների

համար։ Այդ ոտնամանները՝ թէ՛ արանց և թէ՛ կանանց՝ «վրուշիկ» կոչուած տրեխներն են որ գործւում են բացառապէս կանէփի չուանից ու տակը կարճ բևեռներով ծածկւում։ Դա շատ է նպաստում նրանց սատանի նման սարի կողերին մագլցելուն, թէև նրանք ընդունակ են նոյնը անել նաև բոբիկ ոտով։ Գործում՝ են նոյնպէս չափաւոր քանակութեամբ կտաւի հասս տեսակից իրանց գործածութեան համար։ Արդէն նրանք հէնց ամէն բան իրանց գործածութեան համար են շինում. նրանք դուրսը ոչինչ չեն արտադրում, այլ՝ ընդհակառակը՝ ներմուծում։

Թէ ո՛ր աստիճան անգոհացուցիչ են այդ բոլոր «ծրտի-պրտի» արտադրութիւնները համեմատած խիզանցոց ահագին ծախսերի հետ—կը հասկանայ ամէն ոք հետագայից։ Նրանք ամենից առաջ վճարում են տէրութեան բոլոր օրինական տուրքերը. երկրորդ՝ ձրի ծառայում՝ են (հերկում, ցանում, հնձում և այլն) քիւրդ-շէյխին ու որոշ պարգևներ տալիս նրան (ոչխար, բերքեր, փող) և երրորդ՝ անպատմելի «կրօնական» տուրքեր են տալիս կնունքի, պսակի ու հազար ու մի դէպքերի համար Ախթամարի կաթողիկոսին, որի իրաւասութեան տակ, արդէն դարերից ի վեր, գտնւում են նրանք։

Ահա՝ այդպիսի մի դրութիւն են ստեղծել հանգամանքները այդ կտրիճ լեռնականների համար։ Մի դրութիւն, որից ելնելու համար նրանք դիմում են պանդխտութեան, գաղթականութեան ու վաշխառուի հարստահարութեան։ Ի դէպ է այստեղ յիշատակել, որ այդտեղի վաշխառուները բացառապէս բաղէշցի ասորիներն են։ Այդ մի բուռն մարդիկ որոշ շրջանների են բաժանել Խիզանն ու նորա մերձակայ լեռնոտ գաւառները ու տարին միայն մի քանի անգամ «այցելութեան» շնորհ անելով նրանց, կատարում են իրանց բոլոր գործառնութիւնները։

Մասնաւոր ուշադրութեան արժանի են հայ կանայքը Խիզանում։ Ախալցխայի քնքոյշ, վերին աստիճանի չքնաղ իգական—գեղեցիկ հայուհիներին և Վանի ժիր, կայտառ, թարմ ու առողջ աղջիկներին տեսնելուց յետոյ՝ ես անհնարին էի համարում գտնել որ և է տեղ հայ իգական սեռի աւելի գրաւիչ ներկայացուցիչներ։

Բայց այն, ինչ որ ես տեսայ Խիզանում, մի բոլորովին ուրիշ բան էր։ Խիզանցի կնոջ մարմինը նախ և առաջ մի միջին տեղ է բռնում Ախալցխայի կնոջ քնքույշ-վարդագույն և վանցի կնոջ թարմ-արիւնոտ մարմինների մէջ. բնական քնքշութիւնն ու լեռնական աշխատասէր, անվեհեր, ուժեղ կեանքը մի հրաշալի խառնուրդ են պատրաստել այդտեղ։

Բայց խիզանցի կինը ունի նաև երկու ուրիշ մեծ առաւելութիւններ։ Առաջինը՝ նա բարձր է հասակով ոչ միայն ախալցխայի ու վանցի կանանցից, այլ ամեն տեղի կանանցից։ Իսկ աչքի առաջ ունենալով գիտութեան մէջ յայտնի ազգագրական տեղեկութիւնները զանազան աշխարհների կանանց հասակի մասին, ես հաստատ կարող եմ առել, որ խիզանցի հայ կինը աշխարհի ամենաբարձր կանանց տեսակիցն է։ Երկրորդ՝ խիզանցի գեղջկուհու աչքերը սովորական աչքեր չեն. սիրուն, բայց խոր, վսեմ, լուրջ և հպարտ. նա նայում է մարդուն քննելով ու ուսերի վրայից, բայց միևնոյն ժամանակ նա չէ ինայում ընծայել ձեզ իւր սքանչելի, սիրասնունդ ժպիտները։ Ո՛չ շատ պարարտ և ո՛չ նիհար կանայք գոյութիւն չունին Խիզանում, բայց ամենքն էլ մազալի են և այնքան մազալի որչափ որ հարկաւոր է նրանց բնական գեղեցկութիւնը և՛ս աւելի փարթամացնելու ու մի զգայուն տղամարդին բերանաբաց թողնելու... Եթէ այդ չքնաղ դէմքին, ձիգ ու արձան հասակին, խոշոր, իմաստուն աչքերին ու աննման-փարթամ մարմնին աւելացնենք նաև մի խրոխտ ու արքայավայել քայլուածք՝—կստանանք կատարելատիպը այն լեռնական վսեմ թագուհու, որ խիզանցի գեղջկուհի է անուանւում։ Նա քայլում է հաստատ ու մտածուած քայլերով, նրա քայլուածքի մէջ երևում է սեպհական արժանաւորութեան զգացում, նրա քայլերի տակ զնգզնգում է գետինը։ Եւ այդ թանկագին էակի հագուստը այսպիսի մի ծայրահեղ պարզութիւն է ներկայացնում. մերկ մարմնի վերայ նա հագնում է տղամարդու սովորական շապիկը՝ (ընդհանուր երևոյթ ամբողջ Տաճկա-Հայաստանում, թէ՛ գիւղում, թէ՛ քաղաքում) բացուած կրծքի մէջ տեղում։ դա կոճկւում է միայն մի տեղ, կոկորդին։ Ներքևի մասի վերայ, հագնում է կարմիր «շիլայի» (քաթան) լայն ու երկար վարտիկ, որի բերանը կուչ է բերւում ոտների մօտ մի չանով, ինչպէս պարկի բերան։ Այնու-

հետև նա գցում է վրան իւր մի տեսակ երկար շապկի նմանութիւն ունեցող՝ միապաղաղ դերիան ու մէջքը չանով կապում։ Այդ դերիան էլ կրծքի մէջ տեղն է բացւում և համարեա թէ երբէք չէ կոճկւում։ Նա միշտ բորիկ է, վրուշիկները պահում է միմիայն երկար ճանապարհորդութեանց համար։ Գլխին դնում է իւր շնորհալի «կոտիկը» ու գցում վրան մի կարմիր շիլայի թաշկինակ, որի երկու ծայրերը կապւում են բգի տակ։ Այդ «կոտիկը» ընկուզենու բարակ փայտից ոլորած մի կիսալուսին է Թիֆլիսի կանանց «չիխտի»-ի նման, բայց աւելի բարձր, մօտ երեք վերշոկ։—Ա՛յդ է խիզանցի կնոջ բոլոր արդուզարդը։

Նրա թևքերը միշտ վեր քաշած են լինում մինչև արմնկների վերջը, երեսը—մի հազւագիւտ երևոյթ ամբողջ Տաճկահայաստանում—միշտ բաց. կիսաբաց է նաև նրա լուսաթաթախ կուրծքը։

Եւ այդ գեղեցկուհիները մեծ տնտեսական ոյժ են ներկայացնում իրանց երկրում։ Արդէն վերևն ասացի, որ այնքան մեծ քանակութեամբ են խիզանցի տղամարդիկ պանդխտութեան դիմում, որ ամեն մի գիւղում հազիւ տաս, քսան տղամարդ է մնում, մի կողմ թողնելով ծերունիներին ու երեխաներին։ Հապա ո՞վ պէտք է կատարէ ոչ միայն տնային, այլ և դրսի՝ սարի ու «դաշտի»՝ գործերը։ Ո՞վ պէտք է պահէ ծերերին ու երեխաներին։ Ո՞վ պէտք է լինի տան ներկայացուցիչը։—Գեղեցկուհի՛ն և մի՛շտ գեղեցկուհին։ Նա ցանում է, հնձում, ջրում ու պարարտացնում արտերը։ Նա գաւներ, այծեր ու կովեր է տանում արօտները։ Նա ահագին քթոցներով մէջքին շալակած՝ «կուռ» (կենդանիների աղբ) է կրում բնաւ սորութիւն չը համարելով իր համար...

Այո՛, երկիցս պաշտելի է նա, այդ խիզանցի հայուհին։ Պաշտելի՝ իւր սպանող գեղեցկութեամբ, պաշտելի՝ իր բնաւորութեամբ։

Եթէ որևիցէ հատընտիր գեղեցկուհիների մի միջազգային ցուցահանդէս կազմէր Եւրոպայում, Խիզանի սարերից այնտեղ մի քանի նմուշ տանելը ես շատ անհրաժեշտ կը համարէի։

Դժբաղդաբար իգականի նման չէ արական սեռը Խիզանում։ Խիզանցի տղամարդը երևում է թոյլ, յոգնած, մաշւած։ Եւ այդ ոչ

միայն հասակաւորները, այլ և երեխաներ նու պատանիները՝ հինգ տարեկանից սկսած. Խիզանը չէ արտադրում լաւ արական սեռ... Ես չեմ ուզում այդ երևոյթի պատճառները փնտռել այստեղ, բայց ինձ համար մասնաւոր կարևորութիւն ունի ամուսնական ինդիրը նրանց մօտ։

Երբ ես առաջին անգամ, բոլորովին միամիտ կերպով, հարցրի Խիզանի մի 25 տարեկան ուսուցչին թէ քանի՞ տարի կը լինի նրա պսակուելը, նա՝ ինձանից էլ աւելի միամիտ կերպով՝ պատասխանեց. «ո՞վ ունի միտը... ինչ որ աչքս բաց եմ արել, պսակած եմ։ Յետոյ արդէն ես տուգեցի որ խիզանցոց մեծ մասը, այդ ուսուցչի պէս, հէնց որ «աչքը բաց են արել», իրանց կողակիցներին իրանց կողքին են տեսել. նրանց նշանել են օրորոցում կամ 2—3 տարեկան ժամանակ ու պսակել 7—9 տարեկան հասակում։ Մանկահասակ հարսը մնում է փեսեանց տանը իբրև նրանց հարազատ աղջիկ մինչև ամուսինների պէտք եղած հասունութիւնը։ Նաստ քիչ են պատահում այն տեսակ ամուսնութիւններ, երբ հարսն ու փեսան ֆիզիքապէս պատրաստ են լինում, թէև այդ դէպքումն էլ նշանելը անպատճառ փոքր հասակիցն է սկսում։

Որովհետև իմ Խիզան գնալու գլխաւոր շարժառիթը նրա ուսուցիչներն էին, հարկ եմ համարում ասել մի երկու խօսք նաև այդ մասին։

Դեռ. ևս եօթանասնական թուականներին պանդուխտ խիզանցիները կոպէկներ են հաւաքում իրանց մէջ իրանց հեռաւոր հայրենիքի համար որև է օգտակար գործ անելու։ Մի քանի ոսկի շինելուց յետոյ, նրանք վճռում են մի ուսուցիչարան հիմնել Խիզանում, շինում են մի կանոնադրութիւն ու կազմակերպում «Խիզանի ուսուցիչասիրաց ընկերութիւնը»։ Բայց զգալով մենակ գործելու դժուարութիւն և նւազ ձեռնհասութիւն այդպիսի լուրջ բաներում, պանդուխտ գիւղացիք իրանց մէջն են առնում Պոլսեցի մի քանի գաւառասէր ու հասկացող մարդիկ, պաշտօնական ձև տալիս ու այն աստիճան ընդարձակում իրանց ընկերութիւնը, որ նոս բաց է անում կարճ միջոցում հինգ հատ ուսուցիչարան Խիզանում ու Կարճկանում,

պահում վեց-եօթ ուսուցիչ ու մի «ընդհանուր տեսուչ»։ Բայց որովհետև ընկերութեան գործադիր ժողովը իւր բոլոր տեղեկութիւնները ստանում էր այդ ընդհանուր տեսչից և իւր բոլոր տնօրէնութիւնները հիմնում էր նրա խօսքերի ու կարծիքների վերայ,— նա հարկ անհրաժեշտ էր համարել ուղարկել Պոլսից կամ մի ուրիշ տեղից մի բանիմաց մարդ ու քննութեան ենթարկել ոչ միայն աշակերտների գիտութիւնը, այլ և ուսուցիչների և տեսչի այդպիսի մի յեռ ընկած երկրում գործելու յարմարութիւնները։ Նա պատիւ արեց ինձ, յանձնելով այդ «փափուկ» պաշտօնը։

Բայց այդ միջոցին (1886 թ.) փակւած էր արդէն, շնորհիւ Ախթամարի կաթողիկոսի անտարբերութեան [1]), ընկերութեան ուսումնարաններից մէկը։ Ուրեմն ինձ մնում էր տեսնել մնացած չորսը (3—5 տարեայ ուսումով, մօտ 200 արական սեռի աշակերտներով), որ և արեցինք ընդհանուր տեսչի հետ երկու շաբաթւայ ընթացքում։

Իմ ընդարձակ տեղեկագրի մէջ ես շատ մանրամասն նկարագրեցի ու բացատրեցի այն ամենը ինչ որ կապ ունէր գործադիր ժողովի հետաքրքրութեան, հոգածութեան ու պարտականութեանց հետ։ Բերում եմ այստեղ միմիայն նորա մի քանի տող — վերջաբանը, որից հետաքրքիր ընթերցողը կարող է շատ և շատ բան հասկանալ։

«Ինչպէս տեսաք, Ձեր Ընկերութեան բոլոր գործիչները՝ թէ՛ Գործադիր ժողովը, թէ՛ տեսուչը, թէ՛ ուսուցիչները և թէ՛ վերջապէս գիւղացիք՝ շատ և շատ յանցանքներ ունեն։ Յանցանքներ ունենալու խիստ եպերելի չէ, երբ յանցաւորը ճգնում է օր առաջ շիտակ ճանապարհը փնտռելու։ Անցածն անցել է անդառնալի կերպով։ Ես նայում եմ ձեր գործունէութեան իբրև մէկ յառաջաբանի վրայ։ Այդ մի նախակրթարան էր ոչ միայն աշակերտների, այլ և գիւղացոց, ուսուցիչների, տեսչի և... Գործադիր ժողովի համար։

«Ինա՛ւ, բնա՛ւ մի՛ կարծիք, իմ յարգելիք, թէ փարայ մի, ստակ մի կորցրիք։ Դա՛ւ լիցի։ Ձեր ամեն մի փարան հարիւրապատիկ արդիւնք է արտադրել։ Ուրիշ է քննել մէկ մարդու կամ հաստատութեան գործունէութիւն, ուրիշ՝ ցոյց տալ նրա դրական էութիւնը։ Հազարաւոր թերութիւններ կարող եմ ցոյց տալ Ձեր

---

[1]) Այդ մասին ես կը խօսեմ մի ուրիշ յօդւածում։

գործունէութիւնից, բայց մի բան միշտ կայ ու կայ և ա՛յդ է մի լոյս, որ սփռել էք խաւար ու անմխիթար գիւղացոց վրայ։ Մե՛ծ է այդ գործ։

«Պէտք է մի անգամ տեսնել Կարճկոնի և մանաւանդ Խիզանի լքեալ, ազէտ, կիսավայրենի ու խոպանացած գիւղացոց կեանքը, որպէս զի համոզուիք թէ ի՞նչ մեծ բան է, երբ նրանց զաւակները կարողանում են մի բան կարդալ, գրել, պատմել, քննել, հաշուել։ Է՛լ մի կողմ թողնենք նրանց աշխարհագրութիւնը, տաճկերէնը և այլն և այլն, որ մի մի համալսարանական ուսում են նրանց համար։

«Պէտք է մի անգամ մարդ այցելէ այդ կիսակործան վայրերը որպէս զի համոզուի թէ ի՞նչ անփոխարինելի մխիթարութիւն է այդ վշտակիր, աշխարհից մոռացած, շինականների համար, երբ տեսնում են թէ Բիւզանդիոնի յոյժ հեռաւոր ափերում կայ բարի մարդկանց մի խումբ, որ ցաւակից է իրանց ցաւերին, ուրախակից՝ իրանց ուրախութիւններին։

«Օրհնի՛ալ լինիք, բարի՛, ազնի՛ւ ծառայք Քրիստոսի։

«Կնքում եմ վերջապէս խօսքս, յայտնելով իմ խորին շնորհակալութիւնս Խիզանի ընկերութեան բոլոր անդամներին և գործադիր ժողովին՝ Ձեր յոյժ բեղմնաւոր և պատուաբեր աշխատանքի համար։

Սակայն, հակառակ իմ այդ մաղթանքներին, հետևեալ տարին ընկերութիւնը փակուեցաւ... Նա այլ ևս չը կարողացաւ դիմանալ այն զօրեղ հոսանքին, որ գալիս էր Միացեալ ընկերութեան համակրողներից, որոնք ուզում էին անպատճառ կուլ տալ այդ փոքրիկ ընկերութիւնը իրանց մէջ և ձեռքն առնել ամբողջ Տաճկահայաստանի լուսաւորութեան գործը։ Բաւական ժամանակ, քանի որ ես այնտեղ էի, դեռ ևս ոչինչ կարգադրութիւն չէր լինում այդ մասին, իսկ թէ յետոյ վերաբացուեցա՞ն ուսումնարանները կամ ոչ—հաստատ տեղեկութիւն չունեմ ես։

1886-ին Խիզանի շէյխութիւնը, մեռած Ջալալէդդինի տեղ, վարում էր նրա եղբայր Մահմադը։ Դրանց ընտանիքը վաղուց ի վեր արտօնութիւն ունի ժառանգաբար շէյխութիւն անելու։ Այդ շէյխերը, որ ոչ միայն հոգևոր, այլ և մարմնաւոր գլուխ են Խիզանում,

վայելում են իրանց հպատակների անսահման յարգանքն ու աստուածացումը։ Նրանց ամեն մի խօսքը օրէնք է, ամեն մի ցանկութիւն՝—աստուածային ներշնչում։ Նրանց չէ կարելի բամբասել, քննել ու հակառակել։

Բայց շէյխի սրբութիւնը տարածւում է շատ աւելի հեռուն. նա յայտնւում է իւր ժողովրդին որպէս աշխարհի ամենամեծ «հեքիմբաշի» (բժշկապետ)։ Նրա օգնութեան են դիմում ամեն տեսակ ցաւագար ու ախտաժետ մարդիկ և նա գոհացնում է ամենքին, «որքան որ ոյժը պատում է», որովհետև նրա դեղերը մեր՝ բժշկների տուած դեղերի պէս անապատ չեն. նա բժշկում է իր թքով, երեսի, ձեռքի, ոտքի ու շորի լուացքաջրով... Մէկին նա տալիս է իր՝ մի փալասի կտորի մէջ գցած՝ թուքը կամ խորխը, որ նոյնպէս պէտք է տրորէ ջրի մէջ ու խմէ։ Միւսին՝ իր մարմնի կամ շորի լուացքի ջուրը, որ նոյնպէս պէտք է խմէ կամ հաց ունցէ նրանով և ուտէ։ Մի երրորդը մօտենում է ինքն իրան՝ շէյխի ձիով մանգալու ժամանակ՝ ու ագահութեամբ յափշտակում նրա չորքոտանու վերածած աղբը առ ի վայելում...

Շէյխի ճանապարհորդութիւնը լինում է կատարելապէս արքայավայել. ոչ միայն մոլեռանդ քիւրդերը, այլ նոյն իսկ տաճիկները ամեն տեղ կաշւից դուրս են գալիս այդ կրօնապետին մի աւելորդ յարգանք մատուցանելու համար։ Ամեն մի մահմեդական անչափ պատիւ կը համարի իրան եթէ շէյխը բարեհաճի գոնէ մի գիշեր նրա կնոջ մօտ անցկացնել... Դրանով նրա սերունդը կը սրբագործւի կամ նրա չը բեր կինը բերող կը դառնայ։ Ամեն մի մահմեդական չի վստահանայ շէյխի ձեռքը, մինչև իսկ նրա շորը համբուրել, այլ շատերը իրանց երջանիկ են համարում երբ կարողանում են մերձենալ ու լիզել նրա ձիու ծածկոցը, սանձն ու պոչը։ Նա պատյտ է անում իր թեռում շրջապատուած երկու երեք հարիւր ազնուական ձիաւորներով, իսկ երբ կանգ է առնում մի գիւղում կամ քարոզ խօսում՝—ամեն տեսակ երթևեկութիւն, սայլի ու անասունների ոչ դարձ, արգելւում է այնտեղում։ Երբ որ նա շփէ իր ձեռքով հայրաբար մի մարդու ծնոտները, այդ մարդը—լինի նա մահմեդական թէ քրիստոնեայ—համարւում է այնուհետև մի տեսակ կէս-կղերական անձնաւորութիւն, պարտաւորւում է թողնել մօրուք

ու վայելում մի յայտնի աստիճանի յարգանք իր շրջապատողներից։ Դրանք կոչւում են սօֆի և իրաւունք ունեն չէյխի մասնաւոր ողորմածութեան։ Դրանք մի տեսակ, եթէ կարելի է այսպէս ասել, հաջի, մահտեսի կամ մղդսիներ են։ Խիզանում կարելի է տեսնել մի քանի հայ սօֆիներ։

Խիզանը Կորդուաց լեռների առաջին մասումն է։ Աւելի լեռնական ու բիրտ կեանք են վարում նրանցից վերև ապրող հայերը՝ Մոկս, Շատախ, Սպարկերտ, Դէհ ու Բոհտան գաւառներում։

Մոկսը արտադրում է լաւ մեղր, իւղ, խաղող, նուռ ու ծխախոտ։ Շատախը—հանրածանօթ գոյն գոյն ու սիրուն շալ։ Սպարկերտը—ընտիր ընկուզենու կոճղեր, որ մեծ քանակութեամբ ուղարկւում է Եւրոպա վանցի վաճառականների ձեռքով։ Այդ երեք գաւառը, շնորհիւ իրանց այդ արտադրութիւնների, բաւական բարեկեցիկ կեանք են վարում քան միւս երկուսը, որ Տաճկա-Հայաստանի ամենաաղքատ ու անքաղաքակիրթ տեղերից մէկն են։ Շատախը ծանօթ է նոյնպէս իւր հռչակաւոր Կաճետ գիւղով, բացարձակ խենթերի այդ առաջնակարգ հայրենիքով [1]։

Թէ՛ այդ կողմերի և թէ՛ Խիզանի քրդերի վարք ու բարքում նկատելի է մի շատ բնաւորոշ գիծ. Նրանք պատկառում են հայ եկեղեցու հեղինակութեան առաջ ու երդւում նրա անունով…

Բայց այն, ինչ որ յայտնի է Սասնոյ լեռների (Մուշի մօտ) քիւրդերի մասին՝—գերիվերոյ է այդ հանգամանքից։

Ու—հին ծագում ունեցող մի աւանդութիւն ասում է, որ Սասունցի մի քիւրդ, Մշում եղած ժամանակ, մտնում է ղւարճութեան համար՝ պատարագի միջոցին՝ մի եկեղեցի ու մի խումբ հայ գիւղացիների հետ «ճաշակ» վերցնում քահանայից։ Սակայն վախից նա այդ սրբութիւնը չէ կուլ տալիս, այլ ծածուկ հանում է և պահում մի փոքրիկ տուփում։ Սարը վերադառնալիս, առանց ոչո-քին բան ասելու, նա դնում է այդ տուփը մի փեթակում ու հե-

---

[1]) Տես իմ «Կաճետայ կուրը» Հանդէս գրականական և պատմական բ. գրքի մէջ։

ռանում։ Քանի մի ամսից յետոյ, երբ նա մօտենում է փեթակին այնտեղ լցուած մեղրը դագարկելու, նա հանդիսատես է լինում հետագայ տեսարանին. այնտեղ՝ ճիշդ թողած թփի տեղ՝ դրուած է լինում մի մեղրի սկիհ, նորա մէջը՝ մեղրի նշխար՝ մեղրի թաշկինակով ծածկուած... Նա իր գլխին է հաւաքում ամբողջ գիւղը (բացառապէս քրդաբնակ), պատմում ու ցոյց տալիս ամենքին այդ «աստուածային գործը»։ Ամբողջ գիւղը՝ մի հոգի դարձած՝ կառուցանում է իսկոյն այդ փեթակի տեղը մի սիրուն եկեղեցի ու զարդարում նրան պէտք եղած պարագաներով։ Այնուհետև ամեն անգամ, երբ դրանց կողմով մի հայ քահանայ կամ վարդապետ անցնի, նրանք հրաւիրում են այդ հոգևորականին իրանց եկեղեցին, իսկ իրանք շարուում են դրսում՝ շոքած նրա պատերի տակ։ Քահանան ներսը մենակ պատարագ է անում և ապա դուրս գալով երկու երկու նշխար է բաժանում քրդերին, որոնք փոխարէնը տալիս են նրան խիստ աւատ աջահամբոյր։

Ի դէպ է աւելացնել այստեղ, որ այդ նշանաւոր հանգամանքը երբէք չէ արգելում Սասնոյ անառիկ լեռների հայ և քիւրդ բնակիչներին արիւնահեղ պատերազմներ մղելու իրարու դէմ, պատերազմներ, որոնց զսպելու համար ահագին զօրագնդեր են ուղարկուում այնտեղ։